# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԵՒ ԴԱՇՆԱԿ

## Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱՇԽՈՒՆ ԳԱՐՈՒՆ — ՈՐԲԸ
ՏՆԱԿԸ — ՕՐԵՐ
Օ՛, ԻՄ ՍՐԻՆԳ — ԱՅ ԱՐԱԳԻԼ


ՀԱՏՈՐ 12

ՊՈՍՏՈՆ
Copyright 1933, by V. Servantz, Boston

Dessin de
R. CHICHMANIAN

1226

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԵՒ ԴԱՇՆԱԿ

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ*


ՆԱՇԽՈՒՆ ԳԱՐՈՒՆ
ՏՆԱԿԸ
Օ՛, ԻՄ ՍՐԻՆԳ
ՈՐԲԸ
ՕՐԵՐ
ԱՅ ԱՐԱԳԻԼ


ՀԱՏՈՐ 12

Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակները անվաւեր են:

ՊՈՍՏՈՆ
Copyright 1933, by V. Servantz, Boston

Dessin de R. CHICHMANIAN

2011

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI LIBRARY
1226-ԱՀ

# ՆԱՇԽՈՒՆ ԳԱՐՈՒՆ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ

Allegro Amabile




2013
1329-ԱՀ
2471-2011

## ՆԱԽՇՈՒՆ ԳԱՐՈՒՆ

1

Բարով եկար նաշխուն գարուն
Շատ կը սիրենք տեսքդ սիրուն,
Բարով եկար, հազար բարով
Քեզ կը տօնենք երգ ու պարով:

2

Զմրան տժգոյն արեգակին
Հուր ու ոսկի տըւիր այնքան,
Զարդարեցիր հողը կրկին
Ծաղիկներով կախարդական:

3

Զըւարթ սիրտ մ'է երկիրն հիմա
Անհուն խինդով, երգով լեցուն
Սիրտ ալ չկայ որ չը թնդայ,
Բարով եկար սիրուն գարուն:

ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ

LIBRARY OF MALKAS
FOREST HILLS, N.Y.

# ՏՆԱԿԸ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ




# ՏՆԱԿԸ

1

Ձորս դին կանաչ ծառ ծաղիկ,
Տընակն է բոյն մը սիրուն.
Բոյն մը զըւարթ հանդարտիկ,
Սէր ու ժպտով միշտ լեցուն,
Այս տնակը հեռակայ,
Կ'ուզեմ որ իմս ըլլայ:

2

Հոն ծառերուն շուքին տակ,
Թռչուններուն հետ ես ալ,
Իմ ձայնովը, գիլ, յստակ,
Երգել կ'ուզեմ ու խաղալ.
Այս տընակը աննըման,
Իմս ըլլար նոր գարնան:

3

Երգ ու խաղիս անձնատուր՝
Աշխատանքն ալ չեմ մոռնար,
Ծաղիկներուն կուտամ ջուր,
Կը խնամեմ ծառ դալար.
Տուէք ինծի այս ազուոր,
Կանանչ տնակն հեռաւոր:

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

# Օ՛ ԻՄ ՍՐԻՆԳ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ




## Օ՛ ԻՄ ՍՐԻՆԳ

1

Օ՛ իմ սրինգ քաղցրալուր,
Իմ մտերիմն անգին.
Ուրախ ըլլամ թէ տխուր,
Շուրթդ է իմ շրթունքին.
Օ՛ իմ սրինգ քաղցրալուր,
Իմ մտերիմն անգին:

2

Գարնան պայծառ օրերուն,
Ձայնդ է զըւարթ ու վառ.
Կը սըլանայ ան հեռուն,
Տենչերուս հետ խելառ.
Գարնան պայծառ օրերուն,
Ձայնդ է զըւարթ ու վառ:

3

Դալուկ աշուն երբ որ գայ,
Ու սեւ հագնի երկինք,
Հոգուս հետ կը հեկեկայ,
Ձայնիկդ անուշ սրինգ.
Երկրի վրայ սիրտ չկայ,
Որ քեզ պէս ինձ հետ լայ:

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

Երաժշտութիւն՝
Ֆ. ՇՈՒՊԸՐՏ

# ՈՐԲԸ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ




# ՈՐԲԸ

1

Ալ մի ըսէք ինծ համար,
Թէ որբ եմ եւ անտէր:
Ես մայր ունիմ սիրավառ,
Ունիմ անթիւ զաւակներ:
Հայաստանն է մայրը իմ
Օ՛ մայր քաղցրիկ, մայր քնքուշ,
Կարօտ եմ ես քո կրծքին,
Կարօտ տեսքիդ անուշ:

2

Գաւակներն են իմ աններման,
Թուեմ չկայ համար.
Մասիսը վեհ, սէգ Սիփան,
Արաքս, Տիգրիս սրավար:
Իմ հայրենի հողն ունի,
Այնքան ծաղիկ քաղցրահոտ,
Այնքան երգեր թռչունի,
Գարնան պայծառ առաւօտ:

ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

# ՕՐՕՐ

Թարգմանութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ




# ՕՐՕՐ

1

Քընիր իմ սիրուն իշխան,
Թռչնիկներն էլ քուն մտան,
Ինչպէս ծաղկունք պարտիզում,
Ու մեղուներ չեն բզզում.
Լուսնի շողով վառ, արծաթ,
Իմ համբոյրով խանդակաթ՝
Անգին իշխան իմ հանգչիր,
Սիրուն մանկիկ ի ննջիր.
Ննջիր, սիրուն ննջիր:

2

Դղեակին մէջ էլ հիմա
Չկան ձայներ լոյս չի կայ,
Լուսնի շողով դիւթական՝
Ասպետ ծառայ քուն մտան.
Դու էլ քընիր իմ մանկիկ,
Երազներով անդորրիկ,
Դու իմ ասպետ դէ՛հ հանգչիր,
Դու իմ իշխան էլ ննջիր.
Ննջիր, սիրուն ննջիր:

Թարգմ. ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ

# ԱՐԱԳԻԼ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
* * *




## Ա՛Յ ԱՐԱԳԻԼ

Ա՛յ արագիլ բարով եկար,
Հա՛յ արագիլ բարով եկար:
Մեզ գարնան նշան քերիր
Մեր սրտերն ուրախ ըրիր·
Ա՛յ արագիլ բարով եկար
Հա՛յ արագիլ բարով եկար:

Ա՛յ արագիլ բարով եկար,
Հա՛յ արագիլ բարով եկար·
Շինէ բոյնդ մեր ծառին
Հոս կեցիր ամբողջ տարին
Ա՛յ արագիլ բարով եկար,
Հա՛յ արագիլ բարով եկար:

* * *


ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI LIBRARY

ՀՀ Ազգային գրադարան
NL0825697

1226

789
Ս-91

# ԵՐԳԱՀԱՆ Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ

## ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| Հատոր | | | |
|---|---|---|---|
| 8–9 | Սիրոյ եւ Կարօտի Երգեր | (2 հատոր) | 10 մեներգ դաշնակով |
| 10–11 | Հայ Ժողովրդական Երգեր | (2 հատոր) | 12 մեներգ դաշնակով |
| 12–13 | Մանկական Երգեր | (2 հատոր) | 12 երգ դաշնակով |
| 14–15 | Գոհարներ | (2 հատոր) | 10 մեներգ դաշնակով |

*Իւաքանչիւր հատորի գինն է* $1·25

*Ութը հատորը միասին՝* $8·00

## ՆԱԽՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

| Հատոր | | | |
|---|---|---|---|
| 1–4 | Հայ Երգեր (3 հտր·) | 18 մեներգ դաշնակով | 1921–2 |
| 4 | Հայ Պարեր | 6 մեներգ դաշնակով | 1926 |
| 5 | Նոր Երգեր | 6 մեներգ դաշնակով | 1927 |
| 6 | Հոգիի Ձայներ | 6 պար դաշնակի համար | 1926 |
| 7 | Գեղջուկ Երգեր | 6 մեներգ դաշնակով | 1927 |

*Իւրաքանչիւր հատորի գինն է*........ $1·25

*Եօթը հատորը միասին* .................... $7·00

Առանձին լոյս տեսած է խիստ ժողովրդական սիրոյ երգը՝

*Օ Ո՛ Ւ Պ Ը Ճ Ի Ն Կ Օ*

*Գին՝* 50 *սէնթ*

Ապսպրանքներ կ'ընդունուին կանխիկ կամ **C. O. D.**

*Ամէն նամակ չէք կամ մընի օրտըր ղրկել հեղինակին՝*

V. M. SERVANTZ, 23 Wheeler St., Boston, Mass.

Telephone: Hubbard 0491